

ՌԱԶՄԱՃԱԿԱՏԱՅԻՆ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խ. Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Հայ պարբերական մամուլի պատմության մեջ անմոռաց էջեր են գրել Հաղթենական մեծ պատերազմի տարիներին ժամանակի թելադրանքով ստեղծված զինվորական-ռազմաճակատային հայերեն թերթերն ու հանդեսները, թուրքիկներն ու կոչերը: Ռազմաճակատային հայ մամուլը հայ ռազմիկների սիրագործությունների տարեգրությունն է, հայոց ռազմավարության շտեմարանը: Այն միաժամանակ հայոց պարբերական մամուլի 200-ամյա պատմության շղթայի անգնահատելի օղակ է, նորագույն շրջանի պատմության վավերագրական աղբյուր: Զինվորական մամուլը քաղաքական-գաղափարական հզոր գեներ էր զինված ուժերի անձնակազմի ռազմական, քաղաքական, բարոյական և հոգեբանական դաստիարակության առաջնությունը¹:

Հաղթենական պատերազմի տարիներին կարմիր բանակային ռազմաճակատային թերթերի միանվագ տպաքանակը կազմում էր մեկուկես միլիոն օրինակ: Մեծ տպաքանակով լույս էին տեսնում «Կրասնոսարմենց», «Կրասնոֆլոտց», «Յրոտոտվայա իլյուստրացիա», «Կարմիր բանակի ազիտատոր և պրոպագանդիստ», «Կարմիր բանակի ազիտատորի բլոկնոտ» (որն ուներ նաև հայկական տարբերակ) հանդեսները, ռազմագիտական, ռազմատեսիսական ամսագրերը:

Երբ Հաղթենական մեծ պատերազմը սկսվեց, Կար հայերեն զինվորական մեկ թերթ՝ «Կարմիր զինվորը», որը 76-րդ հայկական լեռնահրաձգային դիվիզիայի քաղբաժնի պաշտոնաթերթն էր և ուներ գրեթե քսանամյա պատմություն: Անցած տասնամյակներում «Կարմիր զինվորում» աշխատել էին Հայաստանի զինված ուժերի քաղաքական նշանավոր աշխատողներ, լրագրողներ, գրողներ, մտավորականներ: «Կարմիր զինվորը» խաղաղ ժամանակաշրջանի թերթ էր, հայոց ռազմավարության, ռազմական արվեստի պրոպագանդիստ, հայ ռազմիկների դաստիարակ: Պատերազմի առաջին իսկ օրերից ռազմադաշտում ծնունդ առավ ռազմաճակատային հայ մամուլը: 1941—1945-ին հայերեն լույս են տեսել զինվորական 16 անուն թերթ, որոնցից 10-ը ռազմաճակատների, Զինված ուժերի գլխավոր քաղվարչության թերթերի և հանդեսների հայերեն տարբերակներն էին՝ «Մարտական գրոհ», «Հայրենիքի փառքի համար», «Դեպի թշնամու ջախջախումը», «Սովետական կան», «ԲԳԿԲ մարտիկ», «Առաջ հանուն հայրենիքի», «Սովետական ռազմիկ», «Առաջ, դեպի հաղթանակ» (Անդրկովկասի ռազմաճակատի Սևոսթյան զորքերի խմբի օրգան), «Կարմիր բանակի ազիտատորի բլոկնոտ», ինչպես և «Մարտական աստղ» (45-րդ բանակի քաղվարչության օրգան): Մնացած վեցը՝ «Հայկական սնայպեր», «Կարմիր զինվոր», «Հանուն հայրենիքի», «Մարտական զորոշ», «Մարտ հանուն հայրենիքի» և «Մարտական կադրեր» հայկական ազգային դիվիզիաների օրգաններն էին: Թերթերի նման քանա-

¹ Ռազմաճակատային հայ մամուլի մասին ան՝ս Արամայիս Մնացականյան, Սովետական Հայաստանը Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում, Երևան, 1953, նույնի, Հայ ռազմիկների հերոսության տարեգրությունները, Երևան, 1947, Մ. Նալբանդյան, Թամարցիները, Երևան, 1961, Խ. Բարսեղյան, Կրակների միջով, Երևան, 1982, նույնի, Այսպես ապրեցին... Երևան, 1955, Սասուն Գրիգորյան, Մուսաները լուսեցին, Երևան, 1989:

կույթյունը պատերազմական ժամանակի հրամայականն էր, ռազմատեսական-քաղաքական, ազիտացիոն-մասսայական վիթխարի դործունեության արգասիք: Պատերազմը զենքի էր կոչել շուրջ վեց հարյուր հազար հայերի, նրանց մի մասը ռուսներեն տրված մարտական հրամանները, առաջագրանքները դժվարանում էր միանգամից ըմբռնել, ուստի, հարկավոր էր մայրենի լեզվով մամուլ: Դա բխում էր նաև պետական զաղափարախոսությունից, ազգային քաղաքականությունից: Ինչպես հայկական զորամասերը, այնպես էլ ինտերնացիոնալ զորամասերի հայ ռազմիկները ստանում էին ռազմաճակատային թևերի հայերեն թողարկումները:

Ռազմաճակատների ու բանակների, ինչպես և Զինված ուժերի գլխավոր քաղվարչության մամուլը և հայկական ազգային դիվիզիաների թերթերն ունեին մի ընդհանուր խնդիր՝ ռազմիկներին ոգեշնչել թշնամուն ջախջախելու, Հայրենիքը հիտլերյան ստրկացումից ազատագրելու, աշխարհի քաղաքակրթությունը ֆաշիզմից փրկելու առաքելության զաղափարով: Հիմքում խորհրդային ռազմական դոկտրինան էր: Հայկական դիվիզիաների մամուլը միաժամանակ քարոզում էր ազգային շահերից բխող պահանջներ, փառքի վահանին հանում հայ քաջակոթով ռազմիկների սխրանքները, զինվորներին ու հրամանատարներին ոգևորում հայ ժողովրդի ազատագրական պայքարի գյուցազնական դրվագներով, հայ զորապետների, հերոսների, զինվորների մարտական գործողություններով:

Պատերազմի ժամանակ ձևավորվեցին 89-րդ, 408-րդ, 409-րդ հայկական հրաձգային դիվիզիաները և այլ զորամասեր: Մինչ այդ գործում էր 76-րդ լեռնահրաձգային դիվիզիան, որը պատերազմի սկզբում մարտական առաջադրանք էր կատարում Իրանում, այնուհետև տեղափոխվեց ռազմաճակատ՝ աչքի ընկնելով ստալինգրադյան ճակատամարտում: Երկրի զինված ուժերի ժողովրդի հրամանով 1942-ի նոյեմբերին ստալինգրադյան ճակատամարտի հրացողներում այն վերակազմվեց 51-րդ գվարդիական դիվիզիայի: 1942-ին Ղրիմում գնդապետ Սիմոն Զաքիյանի հրամանատարությամբ գործում էր 390-րդ հայկական դիվիզիան: Ռազմաճակատային հայ մամուլը և լրագրողները գործել են Սևաստոպոլի և Կերչի համար մղված հանդ մարտերում («Մարտական դրոշմ» և «Հայկական սնայպեր»), Դոնբասում և Դոնի տափաստաններում («Հայրենիքի փառքի համար»), Կովկասի պաշտպանություն համար մղված մեծ ճակատամարտում («Առաջ, դեպի հաղթանակ», «Կարմիր զինվոր», «Հանուն հայրենիքի», «Առաջ, հանուն հայրենիքի», «ԲԳԿԲ մարտիկ» և այլն): Միջին Ռուսաստանի տափաստաններում («Դեպի թշնամու ջախջախումը»), Ուկրաինայի, Բելոռուսիայի, Մերձբալթիկայի, Մոսկվայի, Լենինգրադի և այլ քաղաքների պաշտպանության և ազատագրական դաժան կռիվներում («Սովետական ռազմիկ», «Սովորական»)։ Նրանց մի մասին բախտ վիճակվեց լինել ազատագրական կռիվների դրոշակակիրների շարքում, մասնակցել Բելոռուսի ճակատամարտին, նկատագրել Ռախստագի վրա հաղթանակի գրոշի բարձրացման ճակատագրական պահ: Մոսկվայում հրատարակվող «Կարմիր բանակի ազիտատորի բոկոնտը» (Հայկական թողարկման խմբագիրն էր Հմայակ Սիրասը) պատերազմի բոլոր օրերին ռազմիկներին էր հասցնում Մոսկվայի ձայնը, նրանց հորդորում՝ սովորել թշնամուն հաղթելու գիտությունը, շմոռանալ հայրենիքի պատգամը՝ «Արյան դիմաց արյուն, մահվան դիմաց մահ»:

Թեև պատերազմի հաղթական ավարտից 50 տարի է անցել, սակայն տակավին հրապարակի վրա չկան գիտական ամբողջական աշխատություններ՝ նվիրված ռազմաճակատային հայ պարբերական մամուլի պատմությանը, ռազմաճակատ մեկնած լրագրողների գործունեությանը, հատկապես ռազմաճակատային լրագրողներին և հրապարակագիրներին: Այս ուղղությամբ առաջին և միակ հաջող փորձը 48 տարի առաջ կատարել է Մեծ հայրենականի մասնակից, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության երախտավոր Արամայիս Մնացականյանը: ՀՍՍՀ ԳԱ պատմու-

թյան ինստիտուտը 1947-ին լույս ընծայեց նրա «Հայ ռազմիկների հերոսության տարեգրությունները (1941—1945)» գիրքը՝ Հրաշյա Փոշարի «Ողջունելի փորձ» խորագիրն ունեցող ներածականով և խմբագրությանը²։ «Ա. Մնացականյանը, իրադարձությունների տաք տպավորության տակ առաջինը հավաքեց մի փոքր մասն ալն նյութերի,— գրել է Հր. Փոշարը,— որոնք պատմում են Հայրենական պատերազմի և նրա հերոսների մասին... Սա ավարտված պատմություն չէ դեռևս։ Հարուստ, ճշմարիտ ու բովանդակալից նյութեր են սրանք պատմության համար»³։

Հետագայում Ա. Մնացականյանը նորից է անդադարձել ռազմաճակատային մամուլի գործունեությանը, հատկապես իր «Սովետական Հայաստանը Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում» արժեքավոր մենագրության մեջ⁴։

Ռազմաճակատային հայ մամուլի և զինվորական լրագրողների գործունեությունը հաջողությամբ լուսաբանվել է բանաստեղծ Սասուն Գրիգորյանի «Մուսաները շրեքին» պատմագեղարվեստական, գիտավավերագրական ակնարկների երկհատոր մեծածավալ աշխատության մեջ, որի առաջին գիրքը Մեծ հաղթանակի 45-ամյակին լույս է ընծայել «Խորհրդային գրող» հրատարակչությունը (Երևան, 1989)։

Սասուն Գրիգորյանը տակավին պատանեկան տարիներից նվիրվել է հայրենասիրական թեմայի ռեալիստիկական, յուրաքանչյուր ռազմաճակատային զինվորի մեջ ուղղուն և տեսել պատերազմում զոհված իր հոր կերպարը։ Հրապարակի վրա է գրել նաև իր հրեանամյա տղանայան որոնումների և անձանձիթ աշխատանքի արդասիրք՝ նշված ժողովածուն։ Երկրորդ գիրքը, որ նույնպես պատրաստ է տպագրության, բովանդակում է զոհված գրողների կյանքը և գործը։

Արժեքավոր նյութեր կան Կ. Հարությունյանի և Մ. Սահակյանի «Նրանք մարտնչել են հանուն Հայոենիքի» (Երևան, 1988) գրքում, որը նվիրված է պատերազմին մասնակցած ՀՀ ԳԱԱ աշխատակիցների կենսապատմությունի։ Մեծ հաղթանակի օրերին ռուսերեն լեզվով լույս է տեսնելու սույն աշխատությունը՝ լրացված ձևով։

Ռազմաճակատային մամուլի մասին շահավետ հոգվածներ և աշխատություններ են գրել ռազմաճակատային լրագրողներ Գուրգեն Հովսեփյանը, Սիմոն Նալբանդյանը, Արշավիր Հակոբյանը, Վարդան Ղազանչյանը, Վարդան Վարդանյանը, Խաչիկ Աբեղյանը, Հրաշյա Հովհաննիսյանը, Ներսես Ղահրամանյանը և ուրիշներ։ Հատկապես արժեքավոր են «Կարմիր զինվոր» թերթի խմբագիր Սիմոն Նալբանդյանի և «Առաջ, հանուն հայրենիքի» թերթի խմբագիր Արշավիր Հակոբյանի հուշագրությունների գրքերը։ Հարուստ ու բովանդակալից է գեներալ մայոր, Սովետական Միության հերոս Աշոտ Ղազարյանի «Մարդիկ, ապրիներ, ճակատագրեր» քառհատորյակը։ Այն, փաստորեն, հայ ռազմավարության, զորապետների, ռազմական գիտության հանրագիտարան է։ Գիրքը, որ հրատարակվել է հայերեն և ռուսերեն լեզուներով, արժանացել է Հայաստանի պետական մրցանակի։

Ռազմաճակատային հայ մամուլի առանձին օրգանների և ժամանակահատվածների պատմության լուսաբանության գործում ուղագրավ են լրագրող Միհր Ստեփանյանի Անդրկովկասի ժողովուրդների զինվորական մամուլը Կովկասի պաշտպանության ժամանակաշրջանում (1942—1943 թթ.) թեմայով հրատարակած «Կոթող խոսքի սեփով», «Զինվորական մամուլը ռուսական պատմագիտական աղբյուր», «Հրեղեն օրերի մարտական երգեր»⁵ և այլ

² Ա. Մնացականյան, Հայ ռազմիկների հերոսության տարեգրությունները (1941—1945), Երևան, 1947։

³ Նույն տեղում, էջ 6, 7։

⁴ Տե՛ս Լենինյան ուղիով, 1969, № 4, ՀՍՍՀ ԳԱ Լրարեր հասարակական գիտությունների, 1971, № 5, Լենինյան ուղիով, 1985, № 5։

հողվածները, որոնք աղքատագիտական հարուստ նյութեր և տեսական ընդհանրացումներ են պարունակում:

Այսուհանդերձ պատմագիտությունը պարտք ունի Մեծ հայրենականի մամուլի և նրա լրագրողների դործունեության գիտական լուսաբանության դրժում: 89-րդ հայկական Թամանյան, եռակի շքանշանակիր հրաձգային դիվիզիայի հրամանատար գեներալ Նվեր Սաֆարյանը, որ բարձր էր գնահատում մամուլի և լրագրողների աշխատանքը, պատգամել է՝ խնամքով ի մի հավաքել պատերազմի տարիների մամուլը, ռազմիկների, հատկապես զոհվածների հողվածներն ու նամակները և հատուր առ հատուր հրատարակել, հայրերի սխրանքները փոխանցել սերունդներին:

Ռազմաճակատային թերթերն էլ զինվորի ճակատագիր ունեին, կոչում էին, հաղթում: Որքան էլ վտանգը մեծ լիներ, թերթը հրատարակվում էր: Ռադմաճակատային մամուլը ընթերցողի առջև պատկերում է պատերազմի գլխավոր հերոսի՝ զինվորի կերպարը, ցույց է տալիս տպագիր խոսքի ուժը, ռադմաճակատային մամուլի աշխատողների, զինվորական թղթակիցների, հրատարակիչների քաջագործությունները: Զինվորական լրագրողները գեներալ ու լեյտենանտ կոչում էին ֆաշիզմի դեմ և միաժամանակ ստեղծում Մեծ հայրենականի պատմության անմոռաց էջերը, ճշմարտապատում տարեգրությունը, զինվորներին, հրամանատարներին, քաղաշխատողներին ոգեշնչում նորանոր քաջագործությունների, կոչում թիկունքի ու ռազմաճակատի սերտ կապը, պատմում թիկունքայինների աշխատանքային արարումների, զոհաբերությունների մասին:

1941—1942 թթ. ռազմաճակատային հայերեն առաջին թերթերը ձևավորվեցին Ղրիմի համար մղած կռիվներում: Անդրանիկ թերթը «Մարտական գրոհն» էր, որը Ղրիմի ռազմաճակատի քաղաքային թղթային «Բոեվոյ նատիսկի» հայերեն տպրեբրակն էր: Ղրիմի ռազմաճակատը ձևավորվեց 1941 թ. դեկտեմբերին, երբ Կովկասյան ռազմաճակատի զորքերը Սևոսկյան նավատորմի համագործակցությամբ դեսանտ իջեցրին Ղրիմի թերակղզում, գրավեցին Կերչ քաղաքը և Թեոդոսիան: «Կերչ-Թեոդոսիա դեսանտային օպերացիան» հաջող ավարտելուց հետո Կերչում համալրվում էր 390-րդ հայկական հրաձգային դիվիզիան, որը ձևավորվել էր 1941-ի օգոստոսին Վրաստանում: Ռազմաճակատի և դիվիզիայի հայ ռազմիկներին հարկավոր էր մայրենի լեզվով թերթ: Հայաստանից ռազմաճակատ զորակոչվեցին քաղաքական մի խումբ աշխատողներ, այդ թվում՝ հայկական թերթի լրագրողներ և տպագրողներ: Նրանց մեջ էին ճանաչված լրագրողներ «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրի տեղակալ Արամայիս Մնացականյանը, լրագրողներ Ստեփան Կոբրտիկյանը, Աշոտ Թադևոսյանը, գրաշարներ Սուրեն Պողոսյանը, Հայկ Միքայելյանը, տպագրիչ Վարդան Սարգսյանը: Ա. Մնացականյանը նշանակվում է «Բոեվոյ նատիսկի» խմբագրի տեղակալ՝ հայերեն թողարկման գծով: 1942 թ. փետրվարի 11-ին լույս տեսավ «Մարտական գրոհ» անդրանիկ համարը, որի ճակատին տպագրված էր՝ «Ղրիմի ֆրոնտի կարմիր բանակային թերթ», և ապա՝ պատերազմի տարիների զբաղվող կարգախոսը՝ «Մահ գերմանական օկուպանտներին»:

Ինչպես պատմում էր Ա. Մնացականյանը, 1942-ի ցրտաշունչ ձմռանը «Մարտական գրոհ» խմբագրությունը զբաղեցնում էր նավատիների ակումբի շենքը, որը ունեցավ թյուններից ավերակների կույտի էր վերածվել: Ցուրտ ու մութ փլատակներում, մոմի լույսի տակ, այրվող թղթերի կրակով տաքացնում էին տպագրական մեքենաները, սառած ներկը: Հայրենիքի սերը սխրանքների ու հնարամտության էր մղում, բոլորը մի մարդ, մի կամք էին դառնում: Թշնամու ավերակների հարձակումների պատճառով օրական մի քանի անգամ ընդհատվում էր աշխատանքը և նորից վերսկսվում:

Ղրիմի ռազմաճակատը Մեծ Հայքենականի ամենածանր, ողբերգություններով հայտնի հատվածներից էր. մասսայական հերոսական սխրանքների հետ եղան նաև մեծ կորուստներ: 1942-ի ձմռանը Ղրիմի ռազմաճակատի զորամիավորումները պատրաստվում էին հարձակողական մարտերի: Դեռևս փետրվարի 5-ին, մինչև «Մարտական գրոհի» անդրանիկ համարի լույս տեսնելը, խմբագրությունը հայերեն հրատարակել էր ֆաշիստների գազանությունները մերկացնող թերթիկ, որով հայ ռազմիկներին կոչ էր արվում. մահվան զիմաց՝ մահ, արյան դիմաց՝ արյուն, վրեժ լուծել հիտլերականներից՝ իրենց չարագործությունների համար: «Մարտական գրոհը» ջերմ ընդունելություն գտավ զինվորների, հրամանատարների և քաղաշխատողների շրջանում: Թերթը զինվորներին օգնում էր հաջողությամբ կատարել մարտական առաջադրանքները, խրախուսում էր խիզախ ռազմիկներին: Մարտիկների վրա մեծ ապավորություն թողեց «Սերժանտ Նինա Օնիկովան» ակնարկը: Նրանում պատմվում էր սևաստուպոլյան ճակատամարտի քաջարի զենդացրորդ Նինայի մասին, որը ունչացրել էր 500 հիտլերական: Մարտում ծանր վիրավորվելով նա չէր լքել իր հենակետը և գնդացիրը, մարտնչել էր մինչև վերջին շունչը: Հերոսուհին կյանքին հրաժեշտ է տվել ռազմաճակատի հրամանատար Պետրովի ձեռքերի վրա, որը այդ ժամանակ գտնվում էր առաջին գծում:

Թերթը զինվորներին է հասցրել նաև սանհրահանգիչ Լուսիկ Շահինյանի սխրանքները: Մարտադաշտում տեղատարափ կրակի տակ նա հարյուրավոր ռազմիկների կյանք է փրկել: Թերթը հուզիչ նյութեր է հրատարակել քաղաշխատողներ Սարկ Նալբանդյանի, Միսաք Արմենյանի, Ավետիս Դեբենցի, բուժքույր Նազարյանի, հետախույզ Դանիելյանի, զնդացրորդ Գառնիկ Գասպարյանի և այլոց մասին:

Փետրվարի 26-ին լույս տեսավ թերթի հատուկ համարը՝ նվիրված ռազմաճակատի զորքերի հարձակմանը: Տեղի տանցան դաժան մարտեր: Ակրդբում մերոնց հաջողությունները մեծ էին, ճեղքեցին ֆաշիստական զորքերի պաշտպանական գիծը, բայց հետո վրա հասան անհաջողությունները, որոնք ստիպեցին դադարեցնել գրոհները և անցնել ակտիվ պաշտպանության: Այս և այլ գործերի մասին կարդում ենք «Մարտական գրոհի» էջերում: Այդ շրջանում Ղրիմի ռազմաճակատում կատարվում են կադրային փոփոխություններ, մայր թերթի խմբագրի տեղակալ է նշանակվում Բարկեն Շահումյանը, Ա. Մնացականյանը հետ է կանչվում Թիֆլիս և շուտով նշանակվում «ԲԳԿԲ մարտիկի» գլխավոր խմբագրի տեղակալ՝ հայերեն թողարկման գծով: Կադրային փոփոխություններ են կատարվում նաև 390-րդ հայկական հրաձգային դիվիզիայում: Դիվիզիայի նոր հրամանատար է նշանակվում գնդապետ Սիմոն Զաքիյանը:

«Մարտական գրոհը» պարբերաբար հրատարակել է թերթիկներ, թուրքիկներ, Սովինֆոռմբյուրյի հաղորդագրություններից քաղված մարտական դրվագներ, թիկունքից «տացված» աշխատավորական կուլեկտիվների, նշանավոր մարդկանց, գրողների, գիտնականների նամակներ:

Ղրիմի ռազմաճակատի լուծարումից հետո, 1942-ի մայիսի կեսերին Ղրիմը ընկավ՝ մեծ վիշտ սլատճառելով ռազմիկներին և ողջ ժողովրդին: «Մարտական գրոհը» դադարեցրեց իր գործունեությունը:

Տասնամյակների հեռավորությունից թերթի էջերից մեզ են հասնում հայ ռազմիկների սխրագործությունները, որոնց նկարագրման գործում անուրանալի են Ա. Մնացականյանի, Բ. Շահումյանի, Ս. Կուրտիկյանի, Ս. Թագևոսյանի, Մ. Մարտիկյանի, Բ. Կարապետյանի, Վ. Պողոսյանի, Հ. Միքայելյանի, Ա. Աբրահամյանի, տպագրիչ Հովհ. Մարկոսյանի, գրաշարներ Ս. Պողոսյանի, Վ. Գեղամյանի, Ս. Սարգսյանի, Ա. Սաղյանի, Մ. Մովսիս-

6 Հանգամանքներ տե՛ս Ս ու ռ ե ն Թ ո վ մ ա ս յ ա ն, Մեծ Հայքենականի ճանապարհներով, Երևան, 1975:

յանի, Խ. Պետրոսյանի, Փ. Հովհաննիսյանի և այլոց մարտական ծառայությունները:

Հայ պարբերական մամուլի պատմության մեջ իր արժանավոր տեղն ունի 390-րդ հայկական հրաձգային դիվիզիայի «Հայկական սեպյալե» թերթը, որը թեև դուրսն է կառճատե (1942 թ. մարտ-մայիս), բայց թողել է բարի անուն և խոր հետք: Թերթի խմբագիրն էր դրող, ճանաչված լրագրող-հրապարակախոս Գուրգեն Հովնանը (Գուրգեն Ներսեսի Հովհաննիսյան), խմբագրի տեղակալը՝ Աշոտ Դիլանյանը, քարտուղարը՝ Լյուդվիգ Քոչարյանը, գրաշար-տպագրիչներ էին՝ Բ. Հարությունյանը, Հ. Անգրյանը, Ի. Իվանովը և Փ. Գրիգորյանը: Թերթի գործունեությանը ուղարկի հետևում և օգնում էր քաղաքի պեղա Սուրեն Թովմասյանը, որը առհասարակ մեծ հավատ ուներ դրավոր խոսքի, պրոպագանդայի և լրագրողների աշխատանքի նկատմամբ:

«Հայկական սեպյալեի» անդրանիկ համարը լույս է տեսել 1942 թ. մարտի 13-ին՝ «Դեպի առաջ, դեպի հաղթանակ» խորագրի կրող առաջնորդող հոդվածով: Այդ և թերթի մյուս բոլոր հոդվածները աչքի են ընկնում ոչ միայն իրենց ռազմաշունչ ոգով, նպատակասլացությամբ, խելացի խորհուրդներով, հարեհասիրությամբ, այլ նաև լրագրային բարձր ճաշակով, կուլտուրայով, հայեցի, ճոխ լեզվով և գրագիտությամբ: Դրանում մեծ է խմբագրի ներխառնվածքը:

1942 թ. մարտին 390-րդ դիվիզիան մարտական մեծ հաղթանակ տարավ. դաժան մարտերում ջախջախեց գերմանական 22-րդ տանկային դիվիզիան: Թշնամին մարտադաշտում թողեց 47 խփված տանկ: «Տանկերի վրա նստած ավտոմատավորներից ոչ մեկին համարյա չհաջողվեց խուսափել մահից: Երկու օրվա ընթացքում հակառակորդի 170-րդ և 18-րդ հետևակային և 22-րդ տանկային դիվիզիաները կորցրին 6000 մարդ: Հակառակորդի 22-րդ դիվիզիայի ջախջախման գործում հայ մարտիկները ցուցաբերեցին անօրինակ հերոսություն»⁷: Բայց, ավա՜ղ, մարտի 29-ին ֆաշիստական հորդանքների դեմ մղվող անհավասար մարտում մահացու վիրավորվեց դիվիզիայի հրամանատար գեղապետ Սիմոն Զաքիյանը՝ Ղրիմի ռազմաճակատի հայ ռազմիկների ազատագրական կռիվների ռեգիստրն ու կազմակերպիչը: Ղրիմի հերոսը վախճանվեց ապրիլի 2-ին: Մարտի 31-ին դիվիզիայի գնդերին հանձնվեցին մարտական դրոշները: Ս. Զաքիյանի մահը ծանր կորուստ էր զինված ուժերի և ամբողջ հայ ժողովրդի համար:

«Հայկական սեպյալե»-ի ապրիլի 6-ի համարում տպագրվել է Ղրիմի ռազմաճակատ գործողությամբ հայկական պատգամավորության խմբի անդամ Գևորգ Աբովի «Մեր զորամասի դրոշները» բանաստեղծությունը: Ռազմաճակատ էին գործողվել և Ն. Զարյանը, Սարմենը: Մարտական դրոշները հանձնեց Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մացակ Պապյանը:

Թերթի նույն համարում տպագրվել է Նաիրի Զարյանի «Վերջին խոսք» բանաստեղծությունը, որը նվիրված է Սիմոն Զաքիյանի անմահ հիշատակին: Ն. Զարյանը, Գ. Աբովը և Սարմենը գրեցին և թերթում հրապարակեցին Ս. Զաքիյանի դիվիզիայի քայլերգը, որը երգվում էր «Զեյթունցիներ» քայլերգի եղանակով:

«Հայկական սեպյալեի» ապրիլի 9-ի համարում հրապարակվել է Սարմենի «Այց դուրս գալու ներքին» բանաստեղծությունը: Շատ շանցած թերթը տպագրել է նաև Ավետիք Իսահակյանի «Սիրելի հերոս Ս. Գ. Զաքիյանի հիշատակին» հանրահայտ բանաստեղծությունը:

Վարպետի այդ բանաստեղծությունը Ս. Զաքիյանի նկարով «Հայկական սեպյալե» առանձին թերթիկով, ռազմավար շքեղ թղթի վրա, տպագրվել և տարածվել է զորամասում:

«Հայկական սեպյալեի» նյութերը բազմաթանր են, գրական մշակումը՝ բարձր: Նրան թղթակցել են շարքային զինվորներից մինչև դիվիզիայի կո-

7 Նույն տեղում:

միասարկ թերթում նյութեր են տպագրվել թիկունքի՝ Հայաստանի հետ ունեցած կապերի մասին: «Հայկական սնայպերը» փակվելուց հետո Գ. Հովսեփյանը շարունակել է աշխատանքը զինվորական մամուլում. եղել է Կովկասյան, Անդրկովկասյան ռազմաճակատների քաղվարչությունների մամուլի բաժնի աշխատակից, Բելոռուսական 2-րդ ռազմաճակատի 2-րդ հարվածային բանակի մամուլի գլխավոր հրահանգիչ, մարտերով հասել է մինչև Բեռլին:

1942 թ. գարնանը Հայաստանում ձևավորվում է 408-րդ հայկական հրաձգային դիվիզիան: Հրամանատարն էր գնդապետ Կիցուկը: Ստեղծվում է և դիվիզիայի տպագիր օրգանը՝ «Հանուն հայրենիքի» թերթը, որի անդրանիկ համարը լույս է տեսել 1942 թ. մարտի 15-ին Երևանում, իսկ վերջինը՝ նոյեմբերի 22-ին Տուապսեում: Ռազմաճակատում դիվիզիայի քաղբաժնի պետը գումարտակային կոմիսար Սիմոն Սարգսյանն էր, Ղրիմի վերջին օրերի՝ 390-ի մղած կռիվների ակտիվ մասնակիցներից մեկը:

Հրատարակվել է թերթի 112 համար: Խմբագիրը կոստակցական աշխատող, լրագրող, ավագ քաղղեկ Արշավիր Վակոբյանն էր: Խմբագրության քարտուղարը՝ պատմաբան, ավագ քաղղեկ Սուրեն Հակոբյանը: Շուտով թերթի քարտուղար նշանակվեց զրոգ, «Խորհրդային Հայաստան» թերթի նախկին պատասխանատու աշխատող, ավագ քաղղեկ Գևորգ Հայրյանը, այնուհետև ավագ քաղղեկ, նույնպես «Խորհրդային Հայաստան» թերթի աշխատակից Սուրեն Գրիգորյանը: Գրական աշխատողներն էին՝ լեյտենանտ, ժուռնալիստ Արմենակ Թամազյանը, ավագ սերժանտ, դրամատուրգ Մելիք Քոչարյանը: Գրաշարն էր՝ Ռ. Հարությունյանը, տպագրիչը՝ Ս. Նսայանը: Բոլորն էլ բարձրագույն լրագրողներ էին, պոլիգրաֆիստներ: Առհասարակ ռազմաճակատային հայերեն թերթում աշխատանքի էին նշանակվում ճանաչված ժուռնալիստներ, քաղաքացիական փակված թերթերի, մամուլի պատասխանատու գործիչներ: Արշավիր Հակոբյանը 1941-ի հուլիսին զորակոչվել է բանակ, 1942-ի մարտին նշանակվել «Հանուն հայրենիքի» թերթի խմբագիր, իսկ 1942-ի նոյեմբերին՝ Անդրկովկասյան ռազմաճակատի գործերի հյուսիսային խմբավորման «Առաջ, հանուն հայրենիքի» ռուսերեն թերթի խմբագրի տեղակալ, համանուն թերթի հայերեն թողարկման խմբագիր: Հետագայում ծառայել է 89-րդ հայկական-Թամանյան դիվիզիայում, մարտերով Կովկասյան նախալեռներից հասել մինչև Բեռլին: Հետպատերազմյան շրջանում դարձավ ճանաչված պատմաբան, դոկտոր-պրոֆեսոր: Հրապարակեց արժեքավոր մենագրություններ:

1942 թ. սեպտեմբերի 21-ից «Հանուն հայրենիքի» թերթը դառնում է ամենօրյա: Խմբագրության աշխատողները հաճախ էին լինում ստորաբաժանումներում, մոտիկից հաղորդակից դառնում զինվորների մարտական առօրյային: Ս. Գրիգորյանը, Մ. Քոչարյանը, Ա. Թամազյանը կազմակերպում էին զինվորների թղթակցությունները, որոնք տոգորված էին սիրո, անկեղծության և մարտաշունչ ոգով:

«Հանուն հայրենիքի» թերթը, թեև գործել է ընդամենը ութ ամիս, բայց թողել է ողորակի հետք, ճշմարտապատում վկայություններ Կովկասյան ճակատամարտի մասին: Այսպես, նրա էջերում արժեքավոր նյութեր կան Գեղեցիկի մոտ, Արինակայա բնակավայրի ուղղությամբ տեղի ունեցած կռիվների, մեր զինվորների քաջագործությունների վերաբերյալ: Մեր գործերի հարձակումը սկսվել է սեպտեմբերի 23-ին և կարճատև դադարներով շարունակվել մինչև 27-ը: Գոտեմարտը ծանր էր, հայ ռազմիկները սխրանքներ էին զործում: «Հանուն հայրենիքի» թերթի խունացած էջերից մեզ են հասնում հայ զինվորների, հրամանատարների և քաղաքական աշխատողների անվեհեր գործերը:

Թերթի 1942-ի հոկտեմբերի 6-ի համարում ականանետավոր Մ. Ստեփանյանը պատմում է ականաձիգ Ալբերտ Սարգսյանի մասին, որը դիպուկ կրակով լուեցրել է թշնամու կրակակետը, ապահովել մեր հետևակայիների առաջխաղացումը: Շատ նյութեր նվիրված են Տուապսեի մոտ ծավալված

մարտերին, ինչպես՝ կապիտան Ֆ. Սերյակովի և լեյտենանտ Պ. Իսահակյանի ստորաբաժանումների հետախույզների հնարամտության մասին: Հրապարակվել է Գ. Սարյանի «Հանդիպում» քնարական ստեղծագործությունը: Պոետը այդ օրերին նշանավոր մեքենավար Միտիենական Գերագույն խորհրդի պատգամավոր Ալեքսան Ալեքսանյանի, Հաբեթ Դովլաթյանի, Հարություն Օքսուզյանի, Վահան Գրիգորյանի և այլոց հետ, իբրև հայ ժողովրդի պատվիրակ, գտնվում էր ռազմաճակատում, հանդիպումներ էր ունենում և ղեկավարվեստական խոսքի միջոցով ոգեկոչում հայ ռազմիկներին: Թերթը հրատարակել է նաև Վահան Գրիգորյանի «Խիզախ» բանաստեղծությունը՝ նվիրված մարտում զոհված լեյտենանտ Պարույր Իսահակյանի հիշատակին:

408-րդ հայկական դիվիզիան վերակազմվելու պատճառով (դարձավ 7-րդ հետևակային բրիգադ) 1942 թ. նոյեմբերի 22-ին դադարեցրեց իր գործունեությունը: Վերջին համարի առաջին էջի ճակատին տպագրված էր՝ «Ոչնչացնել հիտլերյան բանակը կարելի է և պետք է» կարգախոսը:

Անդրկովկասյան ռազմաճակատի Հյուսիսային զորախմբի, հետագայում Հյուսիս-կովկասյան ռազմաճակատի «Առաջ, հանուն հայրենիքի» թերթը 1943 թ. հունվարից սկսեց լույս տեսնել նաև հայերեն, վրացերեն ու ադրբեյջաներեն: Զորախմբավորման կազմում, բացի ինտերնացիոնալ դիվիզիաներից, գործում էին նաև ֆայակական, վրացական ու ադրբեյջանական դիվիզիաները: Արշավիր Հակոբյանը քաղվարչության կողմից նշանակվում է «Առաջ, հանուն հայրենիքի» ռազմաճակատային թերթի հայերեն թղթարկման խմբագիր (համաձայն ուղևորեն թերթի խմբագրի տեղակալ): Հետագայում նրան փոխարինեց Մովսես Գրիգորյանը: Գրական աշխատողներ էին Վախթանգ Անանյանը, Մարտին Չարյանը, Ղևոնդ Կոմունին, Գրիգոր Սարգսյանը, Լևոն Վաթյանը, Մինաս Մարտիրոսյանը և Արսեն Հովհաննիսյանը: Թերթին ակտիվորեն թղթակցել են Ղևոնդ Դալաքյանը, Խիկար Բարսեղյանը, Ալբերտ Ջաղինյանը և ուրիշներ: Թերթի գրադարը, էջկապը և տպագրիչն էր Խաչիկ Պետրոսյանը: Դա մի հրաշալի ստեղծագործական կոլեկտիվ էր՝ հավատով առնչված մտավորականների, հայրենավեր խիզախների համագործակցություն: Լրագրողը գինվոր է: Նա կոչվում է և՛ գրչով, և՛ զենքով: Արսեն Հովհաննիսյանը, ավա՛ղ, չվերադարձավ ռազմաճակատից, զոհվեց 1945-ի ապրիլի 15-ին, Բեռլինի մատույցներում, երբ հաղթանակը անքան մոտ էր: Թերթի մյուս աշխատողները, Մեծ հաղթանակից հետո զորացրվելով բանակից, բեղմնավոր գործունեություն ծավալեցին՝ արգասավորելով հայ մշակույթը, գրականությունը, գիտությունը:

Հիտլերյան զորքերը նահանջում էին, խորհրդային բանակը շարունակում էր հարձակողական մարտերը. չորս լեզուներով հրատարակվող թերթը, իր անձնակազմով, ալլևս հնարավոր չէր ավտոմեքենաների թափքերում տեղավորել: Խմբագրությունը տեղավորվում է զնացքում: Եթե առաջ ավտոմեքենայի վրա էր, այժմ՝ զնացքի: Արշավիր Հակոբյանը գրել է, թե ինչպես է խմբագրություն-զնացքը ռմբակոծվել, որի ժամանակ վիրավորվել են թերթի մի քանի աշխատակիցներ: Վիրավորներից գրաշար Վասյա Մորոզովի արյունը թափվել է թերթի հավաքածուի վրա: Այն խնամքով սրահպանվում է իբրև այն օրերի անմոռաց հիշատակ:

«Առաջ, հանուն հայրենիքի» թերթը հայ ռազմիկներին է հասցրել հայ ժողովրդի պատմական նամակը ռազմաճակատի հայ մարտիկներին, որը ստորագրել էին 335016 մարդ և առաջին անգամ տպագրվել էր «Պրավդայի» 1943-ի փետրվարի 27-ի համարում: «Առաջը...» այն արտատպեց չորս լեզվով: Թերթը հրատարակել է նաև 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայի ռազմիկների պատասխան նամակը՝ հայ ժողովրդին: Այն ստորագրել էր 6698 ռազմիկ:

Հայ ժողովրդի սրտառու նամակ-պատգամի խոսքերը միայն հայ ռազմիկներին չէ, որ ոգևորել էին: Նամակը մեծ հետաքրքրությամբ կարդում էին ուս, վրացի, ուկրաինացի, ղազախ, ռուսներ և այլ ազգերի զավակ-

ները: Հայ ժողովրդի նամակում ասված էր. «Մենք սպասում ենք այն երջա-

նիկ օրվան, երբ դուք հաղթանակով հետ կդառնաք տուն և մեր շքնաղ. քաղցր մայր Հայաստանը իր ջերմ կրծքին կսեղմի ձեզ՝ իր քաջ որդիներին:

Մենք՝ ձեր հայրերն ու մայրերը և ձեր սիրելիները ու հարազատները, սպասում ենք այն երջանիկ օրվան, երբ դուք հաղթանակից հետո նորից ոտք կդնեք ձեր հայրական օջախը, որպեսզի ձեր հպարտ ճակատին դրոշմենք մեր ջերմագին համբույրը...

Հենու չէ այն օրը, երբ խորհրդային հողը կմաքրվի գերմանաֆաշիստական դարձելի օկուպանտներից: Նորից ազատ կշնչեն մեր տառապած եղբայրներն ու քույրերը: Նորից կծաղկեն ու կփթթեն մեր քաղաքներն ու գյուղերը, թնդանոթների որոտի փոխարեն նորից մեր դաշտերում կթնգա խաղաղ աշխատանքի ու շինարարության երգը:

Այսպիսով, Հայրենական մեծ պատերազմում իր մասնակցությունն է բերել նաև ռազմաճակատային հայ մամուլը՝ հեղինակելով իր ճշմարտացի, ռազմիկներին սիրալենքների ոգեկոշող ձայնը:

ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОЙ ФРОНТОВОЙ ПЕЧАТИ

Х. А. БАРСЕГЯН

Резюме

В период Великой Отечественной войны 1941—1945 гг. на фронтах издавалось шестнадцать армянских газет, в том числе десять фронтовых и Главного Политического Управления Красной Армии — «Мартакан грох» («Боевой натиск»), «Айреники парки амар» («Во славу Родины»), «Депи тшнаму джахджахум» («На разгром врага»), «Суворовец», «Боец РКК», «Арадж анун Айреники» («Вперед, за Родину»), «Советакан зинвор» («Советский воин»), «Арадж депи ахтанак» («Вперед, к победе»), «Блокнот агитатора Красной Армии» и «Мартакан астх» («Боевая звезда»). Остальные шесть — «Армянский снайпер», «Кармир зинвор», («Красный воин»), «За Родину», «Боевое знамя», «Март, анун Айреники» («Бой во имя Родины»), «Мартакан кадьер» («Боевые кадры») являлись органами армянской национальной дивизии.

В статье освещается история газет «Мартакан грох», «Айкакап снайпер», «Анун Айреники» («За Родину», и «Арадж, анун Айреники».